

Շարույթների գործառական արժեքը բժշկագիտական տեսքում

Գասպարյան Նահրա

Օհանյան Մարիաննա

091-32-01-17

mar-ohanian@yandex.ru

Բժշկագիտական տեսքում բնորոշ լեզվական նրկայթերից է *of* նախդրով կազմված բառակապակցությունների լայն կիրառությունը: Հարցն ավելի հանգամանալից պատկերացնելու համար այն քննարկենք Ջահուկյանի շարույթների տեսության տեսանկյունից ելնելով:

Շարույթները¹ լինում են (միայն մեկ բառից՝ միջուկից բաղկացած)՝ միանդամ գոյականական շարույթ: Եթե բառը հանդես է գալիս մեկ շարույթի գլխավոր անդամի (միջուկի դերում), առանց լրացումների, ապա այն հավասարագոր է շարույթի : Այսպիսով, շարահյուսական պաշտոնի կրողը շարույթն է և ոչ թե ինքնին առնված բառը: Բժշկագիտական տեսքում հանդիպում ենք նաև *միանդամ շարույթներ*, որոնք կարող են արտահայտվել տարբեր խոսքի մասերով, օրինակ՝ գոյականով (*pregnancy, disease, varicella, acyclovir*), ածականով (*mild, abdominal, significant*).

Ուշագրավ է, որ թվականական շարույթները մեր քննության նյութի մեջ միանդամ տեսքով չեն հանդիպում: Այսպես, օրինակ *first trimester of pregnancy, half of the patients, one third of patients, 25 percent of fetuses* և այլն:

Օրինակներից կարելի է ենթադրել, որ նմանօրինակ թվականական շարույթները մեր նյութում նշույթավորված են, քանի որ փոխանցում են կարևոր բժշկական տեղեկատվություն: Այժմ փորձենք մանրամասնել ասվածը:

Ինչպես բժշկագիտությունն ընդհանրապես, այնպես էլ բժշկագիտության մանկաբարձության և գինեկոլոգիայի բնագավառը մասնավորապես, գործ ունեն թվականական այնպիսի արտահայտությունների հետ, որոնք կապ ունեն հղիության շրջանի, դեղորայքի օգտագործման չափաբաժնի և դեղորայքի ընդունման ժամանակահատվածի հետ, ինչպես նաև՝ ներարգանդային շրջանի տարբեր ժամանակահատվածներում պտղի չափերի կամ նրա տարբեր մարմնամասերի միջև եղած համաչափության, նաև հղի կնոջ և պտղի քաշի թվային արտահայտման հետ: Թվականներով արտահայտված շարույթները մեծ նշանակություն ունեն նաև գինեկոլոգիական հիվանդություններով տառապող կանանց սեռական օրգանների անատոմիական չափերի փոփոխությունների մասին տեղեկությունները նշելու համար, որոնք մեծ դեր ունեն բուժման ֆոնի վրա տեղի ունեցող դինամիկական դիտարկելու և հսկելու գործում: Թվականական շարույթը հանդես է գալիս գոյականական շարույթի կազմում

որպես որոշիչ: Բնությունը բացահայտում է, որ այս տեսակի շարույթները որոշակի արժեք ունեն, հատկապես, տվյալների քննարկման, ընդհանրացման, վիճակագրական հարցերին անդրադարձող տեքստահատվածներում, երբ ի մի է բերվում կատարված աշխատանքը:

Մակբայական շարույթների մասին խոսելիս անհրաժեշտ է հիշատակել այն փաստը, որ վերջիններս, ինչպես ներքոհիշյալ օրինակներում, բժշկագիտական տեքստում որոշակի էական տեղեկատվության կրող են, հետևաբար կարող են դիտարկվել իբրև նշույթավորված տարրեր:

The ectopic pregnancy *usually* appears as a fusiform....

Culdocentesis is *rarely* indicated in the diagnosis of ectopic pregnancy.

Առաջին դեպքում խոսքը գնում է ընդհանրապես դիտարկվող երևույթի մասին, մինչդեռ երկրորդ դեպքում *rarely* մակբայը միտում ունի ակտիվացնել ուշադրությունը:

Շարույթի Ջահուկյանական ըմբռնումը հասկանալու համար հարկավոր է նկատի ունենալ, որ շարույթի միջուկը (լրացյալը) կարող է ունենալ մեկից ավելի միատեսակ լրացումներ, այսինքն համասեռ շարույթի դեպքում՝ մեկից ավելի որոշիչներ, որոնք որոշյալի նկատմամբ որոշակի դիրք են գրավում: Կիրառելով այդ տեսությունը մեր նյութի նկատմամբ կարելի է ասել, որ մեր ուսումնասիրության նյութում մեծ քանակությամբ առկա համասեռ շարույթներում կարևորվում են որոշիչ և որոշյալի հարաբերությունները: Հարկ է նշել, որ noun+of+noun տիպի գայականական շարույթները բժշկագիտական տեքստում ունեն կադապարային կարգավիճակ: Բժշկագիտական տեքստում հանդիպում են noun+of+noun (գոյական+նախդիր+գոյական), adj+noun (ածական+գոյական) *renal function, renal biopsy, tubal segment, abdominal pregnancy, tubal abortion, vaginal bleeding, mild abdominal pain, intrauterine pregnancy, tubal ligation, early pregnancy*, noun+noun (գոյական+գոյական) կադապարային տիպի շարույթները, ներառյալ շարույթներ, որոնք ներկայացնում են հարադիր բարդություններ² (Սուքիասյան Ա. 2008:232): Նախադասության մեջ, հարադիր բարդությամբ արտահայտված որոշիչները գրավում են նախադաս դիրք: *Aspiration of blood* շարույթում *aspiration* բառը *aspirate* բայից ածանցված գոյականն է:

Որոշիչների բնույթը իմաստաբանական առումով տարբերակվում է: Հետևյալ շարույթում՝ *uterine fundus, blood supply* գոյական + գոյական կադապարում, որը համապատասխանում է հայերենի սեռական հոլովով դրված գոյական հատկացուցչին (արգանդի հատակ, արյան մատակարարում) օգտագործվում է ուղիղ իմաստով: Իհարկե, անգլերենի տեսական քերականության մեջ որոշիչ և հատկացուցիչ լրացումները միմյանցից չեն տարբերակում՝ անվանելով դրանք մեկ ընդհանուր *attribute* բառով: Այդուհանդերձ, որոշիչ և հատկացուցչի իմաստային տարբերությունները ակնհայտ

կերպով դրսևորվում են ինչպես մյուս լեզուներում, այնպես էլ անգլերենում: Որոշիչ լրացումը լրացյալին բնութագրում է որակական տեսանկյունից, մինչդեռ հատկացուցիչ լրացումը ցույց է տալիս լրացյալի՝ ում կամ ինչին պատկանելը:

Առանձին դեպքերում շարույթում իրար կարող են հաջորդել որոշիչ-որոշյալ հարաբերությամբ երկու գոյական (uterine evacuation): Հատկապես կարևոր է Ն.Բ. Ժինկինի դրույթն այն մասին, որ նախադասությունը, ընդհանուր առմամբ, տարբեր աստիճանի պնդումների համաձուլվածք է: Ուշագրավ է, որ Ն.Բ. Ժինկինի տվյալ մոտեցմանը արձագանքում է Վ.Վ.Վինոգրադովը, ով նշում է, որ խոսքային գործունեության և անհատական ոճի իմաստային միավոր կարող է լինել բառը, բառակապակցությունը և նույնիսկ ծավալով և կառուցվածքով ավելի մեծ իմաստային կազմավորումը:³ Այս առումով շարույթների տեսությունը հարցի նկատմամբ ցուցաբերում է ավելի օպտիմալ մոտեցում (Ջահուկյան 2003:15):

Ծարունակելով շարույթների քննությունը՝ հարկ ենք համարում նշել, որ բժշկագիտական տեքստում հանդիպում ենք նաև հարադրավոր բարդություն կազմող շարույթներ, որտեղ էլ առաջադաս մասը գրվում է գծիկով, կարող է կազմված լինել երկու և ավելի մասերից *low-birth-weight infant, iron-deficiency anemia, intra-abdominal pregnancy* և այլն: Նման շարույթները կազմվում են ածական+գոյական+գոյական, գոյական+դերբայ+գոյական ձևերով. *vaso-occlusive crises, low-birth-weight infant, low-grade lymphomas, X-linked trait, , reproductive-age women, long-term development, life-threatening hemorrhage, anti-inflamotary drugs, sex-linked-recessive disorder, well-preserved renal function, fetus-placenta, enzyme-linked immunoassay, x-ray film, low-dose inhalational agents, , false-positive syphilis serology, low-dose aspirin, high-risk patients, large-gauge intravenous catheters, j-tip is passed into the vein, , five-year survival, cheese-like discharge, x-ray mammography, high-grade and estrogen receptor-negative cancers, providone-iodine douche, post-term pregnancy, term-sized uterus, deep-tendon hyperreflexia, Doppler-sensed fetal movement, knee-chest position, low-grade fever, long-term bed, vibro cholera, a gram-negative aerobe.*

Նմանօրինակ շարույթները մեծ թիվ են կազմում նշված խոսույթի շրջանակներում, որը թույլ է տալիս դրանք դիտարկել իբրև բժշկագիտական գրավոր խոսույթի կայուն հատկանիշ: Հետաքրքրական է այն փաստը, որ գիտական ուղղվածություն ունեցող այլ խոսույթներում նման շարույթներից գծիկն(-) ընդհանրապես բացակայում է, օրինակ *low incident power region, fields effect transistors, optical communications system* : Սակայն կգանկանայինք նշել, որ The American Journal of Emergency Medicine ամսագիրը (<http://www.sciencedirect.com/science/article/pii/073567579090318T>) նույնպես պարունակում է նշված կարգի կապակցություններ, որոնցում բացակայում է գծիկը (-): Այս պարագայում,

թերևս, կարևորվում է այն, որ ամերիկյան գրքային խոսույթը ունի իր ուրույն պահանջները: Ըստ երևույթին, գծիկով հարադրությունները շեշտում են այն, որ նշված շարույթները պետք է անհրաժեշտաբար ընկալել իբրև անքակտելի ամբողջություն, որը պատկերաստեղծության միտում ունի, իսկ պատկերն էլ նպաստում է նյութն առավել առարկայական ու շոշափելի դարձնելուն:

Հատկապես հետաքրքիր երևույթ են իրենցից ներկայացնում այն շարույթները, որոնք իրենց կազմում ունեն հապավումներ. հաճախ նմանօրինակ շարույթը կարող է բաղկացած լինել մեկ բառից, որը չի գիտակցվում իբրև հապավում, այլ գործածվում է որպես լիարժեք բառ, հաճախ գոյականի կարգավիճակով. օրինակ՝ CV, VOMIT, TEETH, WALL, DENTIST և այլն: Վերը նշված օրինակները բժշկագիտական տեքստերում կիրառվում են այլ իմաստով, բառարանային իմաստը բոլորովին չի համընկնում բժշկագիտական տեքստերում հանդիպող իմաստի հետ: Ասվածն ավելի մանրամասն քննարկենք օրինակով. TEETH հապավումը որը թարգմանվում է որպես *ատամներ*, միանգամայն նոր իմաստ է ձեռք բերել ատամնաբուժության բնագավառից դուրս, բայց դարձյալ բժշկագիտական տեքստում, այն է՝ *փորձված բժիշկ* և այլն:

Այժմ անդրադառնանք կայուն բառակապակցային շարույթների միջոցով ներկայացող որոշիչ-որոշյալ հարաբերությանը, որը բժշկագիտական խոսույթում հաճախ ձեռք է բերում տերմինի կարգավիճակ. *reproductive-age women*: Ընդ որում, իբրև տերմին չվերաարժեքավորվող շարույթների մի մասն էլ պարզաբանում և մեկնաբանում են տերմինը՝ ամբողջականացնելով նրա արտահայտած գաղափարը:

Վերը նշված խմբից քննության նպատակով առանձնացնենք *life-threatening hemorrhage* (կյանքին սպառնացող արյունահոսություն), *large-gauge intravenous catheters* (խոշոր չափերի ձողախողովակ) տերմինաբանական շարույթները:

Նշված գծիկավոր հարադրություն-տերմինների հայերեն համարժեքներն ունեն ավելի շատ նկարագրական-բացատրական բնույթ, մինչդեռ անգլերենում նրանք ստեղծում են դիպուկ պատկերային արտահայտություն, որոնք հատկանշական են գրքային բժշկագիտական խոսքին և, կարծես, դիպուկ լինելուց բացի հետապնդում են նաև խոսքն առավել հակիրճ ու սեղմ դարձնելու միտում, որի շնորհիվ այն՝ խոսքը, զերծ է մնում ավելորդ, տեղեկատվություն չպարունակող միավորներից: Ըստ էության, սրանով շեշտը դրվում է նվազագույն բառային միավորների գործածության միջոցով առավելագույն տեղեկատվություն հաղորդելու վրա: Սա այն դեպքերից է, երբ խիստ սերտաճած լինելով, ձևն ու բովանդակությունը դառնում են այնպիսի հակադրամիասնություն, երբ դժվար է ասել, թե որն է նրանցից առաջնային:

Այժմ քննարկենք այն դեպքերը, երբ համասեռ շարույթները կազմված են ածական թվական հարաբերակցությամբ՝ **ածական+թվական** կաղապարներով, ինչպես օրինակ.

multiple-gestation pregnancy, one third of patients, 1.500 cases of congenital syphilis, trimester of pregnancy, the sixteenth week of gestation, gonorrhoea is an asymptomatic infection in 80 percent of women, half of the patients և այլն:

Բժշկագիտական տնքստերում հանդիպում ենք գոյական+շաղկապ+ածական+գոյական (noun+and+adj+noun) շարայթները, որոնք օրինակ դեղամիջոցների օգտագործման հրահանգներում ունեն ճանաչողական նշանակություն, ընդ որում, հանդես գալով վերնագրի կազավիճակով, գրվում են մեծատառերով. օրինակ՝ գոյական+գոյական (noun+noun) System Organ Class, ածական+գոյական (adj+noun) Gastrointestinal Disorders, գոյական+շաղկապ+ածական+գոյական (noun+and+adj+noun) General Disorders and Administration Site Conditions:

Չնայած մեկ հոդվածի սահմանում հնարավոր չէ վերլուծել շոշափելի քանակությամբ օրինակներ, այնուամենայնիվ, նշենք, որ ելնելով նյութի մանրակրկիտ քննությունից կարելի է ասել, որ բժշկագիտական խոսույթում հիմնական մաս են կազմում գոյականական, ածականական և բայական շարայթները:

Ծանոթագրություններ

1. Ծարույթը բառ կամ բառակապակցություն է, որ կատարում է շարահյուսական մեկ գործառույթ, այսինքն՝ հանդես է գալիս նախադասության կամ մի այլ շարայթի կազմում մեկ անդամի պաշտոնով: Եթե բառը հանդես է գալիս շարայթի գլխավոր անդամի (միջուկի) դերում առանց լրացումների (առմիջուկային բաղադրիչներ), ապա այն հավասարագոր է շարայթի: Ծարահյուսական պաշտոնի կրողը շարայթն է և ոչ թե ինքնին առնված բառը (Ջահուկյան Գ. 2003:14):
2. Վերլուծական եղանակով կազմվող այն բարդությունները, որոնց կազմի մեջ մտնող երկու և ավելի բառեր առանց միաձուլվելու, հանդես գալով հարադրաբար արտահայտում են մեկ բառի իմաստ, կոչվում են հարադրական բարդություններ: Հարադրական բարդությունների բաղադրիչները հանդես են գալիս անջատաբար, պահպանում են իրենց ձևական անկախությունը, որ գրավոր խոսքում արտահայտվում է բաղադրիչ-բառերի կամ անջատ, կամ էլ միացման գծիկով գրությամբ (Սուրիասյան Ա. 2008: 232):
3. Խոսքային նվազագույն միավորի ընտրության հարցը ողակիորեն կախված է տնքստի գործառական- ոճական պատկանելությունից, այն կարող է տատանվել բառից մինչև վերասույթային միասնություն (այդ մասին ավելի մանրամասն տես Alexandrova O., Ter-Minasova S.1987, Тер-Минасова М.С. 1980,1981):

Գրականություն

1. Եզնեյան Լ. Հայոց լեզվի ոճագիտություն. Եր. Համ. Հրատ. Երևան., 2007. 367 էջ.
2. Զահուկյան Գ. Շարահյուսական ուսումնասիրություններ.- Երևան.: Աստղիկ 2003.-165 էջ.
3. Սուքիասյան Ա.Մ. Ժամանակակից հայոց լեզու.-ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2008, 352 էջ.
4. Alexandrova O., Ter-Minasova S. English Syntax (Collocation, Colligation and Discourse) Moscow University- 1987.
5. Тер-Минасова М.С. Синтагматика речи: Онтология и эвристика. М., МГУ, 1980.
6. Тер-Минасова М.С. Синтагматика функциональных стилей: Автореф. дис. докт. филол. наук.-М., 1981.
7. Kenneth R. Niswander, Arthur T. Evans. Manual of Obstetrics. 5th edition Boston, New York, Toronto, London. Little, Brown and Company. 1995.
8. William R. Keye, Jr. Laser Surgery in Gynecology and Obstetrics. 2nd edition Chicago, London, Boca Raton, Littleton, Mass. Year Book Medical Publishers, INC. 1990.
9. The American Journal of Emergency Medicine 1990, N3.

Ինտերնետային էջեր

<http://www.sciencedirect.com/science/article/pii/S073567579090318T>